# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## Ա Ր Մ Ա Վ Ի Ր Ի   Մ Ա Ր Զ Պ Ե Տ

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

<<09>> նոյեմբերի 2015թ.                                        N 170 - Ա

ք. Արմավիր

**ՉԻՆԱՐ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻՆ <<ԱՐԱԶԱՓԻ Թ. ՀՈՒՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ>> ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ՊԱՇՏՈՆՈՒՄ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի առաջին մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի մարտի 4-ի N 319-Ն որոշմամբ հաստատված կարգի 34-րդ կետով և հիմք ընդունելով <<Արազափի Թ. Հուրյանի անվան միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության խորհրդի նախագահի 2015 թվականի հոկտեմբերի 28-ի գրությունը.

*ո ր ո շ ո ւ մ   ե մ՝*

1. <<Արազափի Թ. Հուրյանի անվան միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության ընտրված տնօրեն Չինար Կարապետյանի հետ 2015 թվականի նոյեմբերի 9-ից կնքել աշխատանքային պայմանագիր հինգ տարի ժամկետով՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝                                        Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ